Հավելված N 1

ՀՀ կառավարության 2011 թվականի
փետրվարի 3-ի N 77 - Ա որոշման

Ց Ա Ն Կ

«ՍՊԱՅԿԱԵ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ

NN ը/կ	ԱՏԳ ԱԱ-ի ծածկագիրը	Անվանումը	Մոդելը	Չափի միավորը	Քանակը	Ծագման երկիրը	Արտահանման երկիրը	Արժեքը (դրամ)	Ներմուծման ժամկետը (տարի/եռամսյակ)	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1.	8704 22 910	Քարշակ	Volvo	հատ	156	Բելգիա	Բելգիա	5,347,500,000	2011/I	2013/IV
2.	8704 22 990	Քարշակ	Volvo	հատ	1	Բելգիա	Բելգիա	34,300,000	2011/I	2012/IV
3.	8704	Բեռնատար ավտոմեքենա	-	հատ	15	-	-	282,000,000	2011/I	2013/IV
4.	8716 39 300	Կիսակցորդ	Krone	հատ	156	Գերմանիա	Գերմանիա	4,169,500,000	2011/I	2013/IV
5.	8716 39 800	Կիսակցորդ	Krone	հատ	1	Գերմանիա	Գերմանիա	27,000,000	2011/I	2012/IV
6.	8704 22 910	Քարշակ	Volvo	հատ	15	Բելգիա	Բելգիա	547,500,000	2011/I	2013/IV
7.	8609 00 900	Կոնտեյներ՝ ավտո և երկաթգծով միջազգային բեռնափոխադրումների համար	Krone	հատ	30	Գերմանիա	Գերմանիա	519,000,000	2011/I	2013/IV
8.	8716 39 590	Կցասայլ-կոնտեյներատար	Krone	հատ	15	Գերմանիա	Գերմանիա	102,000,000	2011/I	2013/IV
9.	8477 80 190	Ֆորմավորող սարքավորում (պոլիստիրոլե արտադրանքի համար)	-	հատ	3	Գերմանիա	Գերմանիա	202,500,000	2011/I	2013/IV
10.	8479 89 970	Նախափրփրիչ սարքավորում	Kurtz GmbH, E.A. Haitz GmbH	հատ	1	Գերմանիա	Գերմանիա	80,000,000	2011/I	2012/IV
11.	8480 71 000	Պոլիստիրոլե արտադրանքի սարքավորման ֆորմա	T.Michel Formenbau GmbH, COMEL S.n.c. di Aldo Beccaro & C.	հատ	10	Գերմանիա, Իտալիա, Ռուսաստան	Գերմանիա, Իտալիա, Ռուսաստան	125,000,000	2011/I	2013/IV
12.	8428 90 950	Սիլոսային սարք (լրակազմ)	Kurtz GmbH, E.A. Haitz GmbH	հատ	4	Գերմանիա	Գերմանիա	18,120,000	2011/I	2013/IV
13.	8477	Էքստրուզիոն սարքավորում՝ լրակազմով	-	հատ	2	Իտալիա, Գերմանիա	-	98,000,000	2011/I	2013/IV
14.	8427 10 100	Պահեստային ամբարձիչ՝ մարտկոցով	OMG, LINDE	հատ	7	Իտալիա, Գերմանիա	Իտալիա, Գերմանիա	68,250,000	2011/I	2013/IV
15.	8427 90 000	Մեխանիկական պահեստային ամբարձիչ	OMG	հատ	20	Իտալիա	Իտալիա	5,000,000	2011/I	2013/IV
16.	8422 40 000	Պալետավորող սարքավորում	SORMA,Sermac, Siat, Robopac	հատ	2	Իտալիա	Իտալիա	25,560,000	2011/I	2013/IV
17.	8433 60 000	Մրգեր կամ զյուղատնտեսական այլ մթերքներ տեսակավորող մեքենաներ՝ լրակազմով	SORMA, EMVE, Allround, Агропак,Sermac	հատ	4	Իտալիա, Շվեդիա, Հոլանդիա, Ռուսաստան	Իտալիա, Շվեդիա, Հոլանդիա, Ռուսաստան	500,000,000	2011/I	2013/IV
18.	8443	Արկղերի վրա տպագրող սարքավորումներ՝ լրակազմով	-	հատ	2	Դանիա, Գերմանիա	Դանիա, Գերմանիա	125,000,000	2011/I	2013/IV
19.	8422	Պիտակավորող սարքավորում	-	հատ	3	Դանիա, Գերմանիա	Դանիա, Գերմանիա	125,000,001	2011/I	2013/IV

11_0077

1	2	3	4	5	6	7	8	9	10	11
20.	8438	Մրգի և բանջարեղենի վերամշակման սարքավորում՝ լրակազմով	-	հատ	3	Ռուսաստան, Իտալիա	Ռուսաստան, Իտալիա	375,000,000	2011/I	2013/IV
21.	8435	Հյութի ստացման սարքավորում՝ լրակազմով	-	հատ	4	Ռուսաստան, Իտալիա	Ռուսաստան, Իտալիա	200,000,000	2011/I	2013/IV
22.	8419	Ջերմաստիճանի փոփոխման միջոցով գյուղատնտեսական մթերքների վերամշակման սարքավորում՝ լրակազմով	-	հատ	7	Իտալիա, Գերմանիա	Իտալիա, Գերմանիա	300,000,000	2011/I	2013/IV
23.	8441 30 000	Գոֆրաստվարաթղթից արկղեր պատ-րաստող ավտոմատ սարքավորում՝ լրակազմով	TECO	հատ	1	Իտալիա	Իտալիա	92,500,000	2011/I	2012/IV
24.	8422 30 00	Վերամշակված միրգ-բանջարեղենի 22ալցման սարքավորում՝ լրակազմով	-	հատ	2	Ռուսաստան, Սլովենիա, Գերմանիա, Իտալիա	Ռուսաստան, Սլովենիա, Գերմանիա, Իտալիա	100,000,000	2011/I	2013/IV
25.	7610	Ալյումինե դռների կոնստրուկցիա՝ լրակազմով	Hormann	հատ	30	Գերմանիա	Գերմանիա	211,500,000	2011/I	2013/IV
26.	8437	Սերմերի տեսակավորման սարքավորում՝ լրակազմով	-	հատ	1	Հոլանդիա	Հոլանդիա	32,900,000	2011/I	2012/IV
27.	3911 90 990	Հատակի պոլիմերային ծածկույթ	-	կգ	3000	ԱՄՆ, Ռուսաստան	ԱՄՆ, Ռուսաստան	12,500,000	2011/I	2013/IV
28.	8526 91 80	Տեղորոշման սարքավորում	-	հատ	175	-	Լիտվա	12,250,000	2011/I	2013/IV
29.	7311 00 100	Կրակմարիչ՝ 842410	-	հատ	300	Ռուսաստան, Գերմանիա	Ռուսաստան, Գերմանիա	7,500,000	2011/I	2013/IV
30.	8541	Դիոդային լամպեր	-	հատ	800	Ռուսաստան, Չինաստան	Ռուսաստան, Չինաստան	12,000,000	2011/I	2013/IV
31.	8477 80	Պոլիստիրոլի վերամշակման սարքավորում՝ լրակազմով	-	հատ	2	Գերմանիա	Գերմանիա	20,000,000	2011/I	2013/IV
32.	9403	Օֆիսային կահույք (մետաղյա, պլաստմասսայե և փայտյա)	-	կգ	25000	-	-	80,000,000	2011/I	2013/IV
33.	8525	Ռադիոկապի միջոցներ	Motorolla, Uniden	հատ	25	-	-	9,125,000	2011/I	2013/IV
34.	8443	Տպող սարքեր	-	հատ	22	ԱՄՆ, Դանիա, Գերմանիա	ԱՄՆ, Դանիա, Գերմանիա	8,800,000	2011/I	2013/IV
35.	8471	Համակարգիչներ՝ լրակազմով	-	հատ	30	ԱՄՆ	ԱՄՆ	12,045,000	2011/I	2013/IV
36.	8701 90	Տրակտոր՝ անվավոր, գյուղատնտեսական աշխատանքների համար	-	հատ	5	Գերմանիա	Գերմանիա	50,000,000	2011/I	2013/IV
37.	7610 90	Ալյումինե կամրջակներ	Altec	հատ	15	Գերմանիա	Գերմանիա	7,500,000	2011/I	2013/IV
38.	8425 11 000	Վերամբարձ սարք (մինչև 20 տոննա)	-	հատ	5	Գերմանիա	Գերմանիա	25,000,000	2011/I	2013/IV
39.	9027	Բույսերի, միրգ-բանջարեղենի որակի ստուգման սարքավորումներ	-	հատ	30	Հոլանդիա	Հոլանդիա	7,500,000	2011/I	2013/IV
40.	8429 52 100	Էքսկավատոր՝ թրթուրավոր (3.9 տոննա)	-	հատ	2	ԱՄՆ, Գերմանիա	Գերմանիա	15,000,000	2011/I	2013/IV
41.	8429 59	Էքսկավատոր՝ անիվավոր (16.0 տոննա)	-	հատ	2	Գերմանիա	Գերմանիա	70,000,000	2011/I	2013/IV
42.	8429 11	Բուլդոզեր՝ թրթուրավոր (18.2 տոննա)	-	հատ	1	Գերմանիա	Գերմանիա	50,000,000	2011/I	2012/IV
43.	8429 40 900	Հողի հարթեցման վալց (6 տոննա)	-	հատ	1	Շվեդիա	Գերմանիա	10,000,000	2011/I	2012/IV
44.	8423	Ցածրապրոֆիլային կշեռք	МАССА-К, ДИНА	հատ	3	Բելառուս,	Բելառուս,	1,500,000	2011/I	2013/IV

1	2	3	4	5	6	7	8	9	10	11
						Ռուսաստան	Ռուսաստան			
45.	8429 51	Ամբարձիչ՝ անիվավոր (24 տոննա), հողային աշխատանքների համար	-	հատ	1	Գերմանիա	Գերմանիա	35,000,000	2011/I	2012/IV
46.	8433 20	Խոտհնձիչ	KRONE EasyCut	հատ	1	Գերմանիա	Գերմանիա	4,210,000	2011/I	2012/IV
47.	8433 30	Ռոտորային խոտհավաք մեքենա	KRONE Swadro	հատ	1	Գերմանիա	Գերմանիա	2,852,500	2011/I	2012/IV
48.	8433 30	Խոտը շուռ տվող մեքենա	KRONE KW	հատ	1	Գերմանիա	Գերմանիա	4,490,000	2011/I	2012/IV
49.	8432	Պարարտանյութերի և քիմիական միջոցների տարածման սարքավորում	-	հատ	10	Գերմանիա, Իտալիա, Հոլանդիա, Ռուսաստան	Գերմանիա, Իտալիա, Հոլանդիա, Ռուսաստան	22,500,000	2011/I	2013/IV
50.	8433	Բանջարաբոստանային մշակաբույսերի մշակման սարքավորումներ՝ լրակազմով	-	հատ	10	Հոլանդիա, Իտալիա, Գերմանիա	Հոլանդիա, Իտալիա, Գերմանիա	135,000,000	2011/I	2013/IV
51.	8433 40 100	Հասկահավաքիչ-մամլիչ	KRONE KR	հատ	1	Գերմանիա	Գերմանիա	12,252,500	2011/I	2012/IV
52.	8418	Սառնարանային սարքավորումներ՝ լրակազմով	-	հատ	130	Ռուսաստան, Գերմանիա, Հոլանդիա	Ռուսաստան, Գերմանիա, Հոլանդիա	234,000,000	2011/I	2013/IV
53.	8415	Օդակարգավորիչ՝ լրակազմով, գլիկոլով աշխատող	Kracun	հատ	3	Սլովենիա	Սլովենիա	150,000,000	2011/I	2013/IV
54.	8537	Սառնարանային համալիրի ավտոմատ կառավարման համակարգ	OCTPOB, Kracun, Gunter	հատ	61	Ռուսաստան, Սլովենիա, Գերմանիա	Ռուսաստան, Սլովենիա, Գերմանիա	7,500,000	2011/I	2013/IV
55.	8414	Թթվածին, ազոտ մատակարարող սարքավորում՝ լրակազմով	-	հատ	6	Հոլանդիա	Հոլանդիա	324,000,000	2011/I	2013/IV
56.	8405	Թթվածին, ազոտ արտադրող սարքավորում՝ լրակազմով	-	հատ	6	Հոլանդիա	Հոլանդիա	405,000,000	2011/I	2013/IV
57.	8421	Գազերի և հեղուկների ֆիլտրման սարքավորում	-	հատ	20	Ֆրանսիա, Հոլանդիա, Գերմանիա	Ֆրանսիա, Հոլանդիա, Գերմանիա	75,200,000	2011/I	2013/IV
58.	9027	Ֆիզիկական ու քիմիական անալիզի սարքավորում	-	հատ	20	Ֆրանսիա, Հոլանդիա, Գերմանիա	Ֆրանսիա, Հոլանդիա, Գերմանիա	37,600,000	2011/I	2013/IV
59.	7610	Սառնարանային դռներ՝ ալյումինե	-	հատ	40	Ռուսաստան, Սլովենիա, Գերմանիա	Ռուսաստան, Սլովենիա, Գերմանիա	120,000,000	2011/I	2013/IV
60.	8462 91	Հիդրավլիկ մամլիչ	-	հատ	3	Ռուսաստան, Գերմանիա, Իտալիա	Ռուսաստան, Գերմանիա, Իտալիա	50,000,000	2011/I	2013/IV
61.	8467	Հղկող էլեկտրական գործիք	-	հատ	3	Ռուսաստան, Գերմանիա, Իտալիա	Ռուսաստան, Գերմանիա, Իտալիա	40,000,000	2011/I	2013/IV
62.	8467 21	Պտուտակահանող սարքավորում՝ լրակազմով	-	հատ	3	Ռուսաստան, Գերմանիա, Իտալիա	Ռուսաստան, Գերմանիա, Իտալիա	42,500,000	2011/I	2013/IV

1	2	3	4	5	6	7	8	9	10	11
63.	8424	Ավտոլվացման սարքավորում՝ լրակազմով	-	հատ	1	Ռուսաստան, Գերմանիա, Իտալիա	Ռուսաստան, Գերմանիա, Իտալիա	75,000,000	2011/I	2012/IV
64.	8206 00 000	Գործիքներ	-	հատ	200	Ռուսաստան, Գերմանիա, Իտալիա	Ռուսաստան, Գերմանիա, Իտալիա	50,000,000	2011/I	2013/IV
65.	8425	Ամբարձիչ	-	հատ	4	Ռուսաստան, Գերմանիա, Իտալիա	Ռուսաստան, Գերմանիա, Իտալիա	9,000,000	2011/I	2013/IV
66.	8468	Զոդող սարքավորում՝ լրակազմով	-	հատ	2	Ռուսաստան, Գերմանիա, Իտալիա	Ռուսաստան, Գերմանիա, Իտալիա	9,000,000	2011/I	2013/IV
67.	9031 20	Ստենդ՝ լրակազմով	-	հատ	4	Ռուսաստան, Գերմանիա, Իտալիա	Ռուսաստան, Գերմանիա, Իտալիա	36,000,000	2011/I	2013/IV
68.	8504	Ինդուկցիոն տաքացուցիչ	-	հատ	2	Ռուսաստան, Գերմանիա, Իտալիա	Ռուսաստան, Գերմանիա, Իտալիա	4,500,000	2011/I	2013/IV
69.	8515	Էլեկտրական զոդող սարք	-	հատ	2	Ռուսաստան, Գերմանիա, Իտալիա	Ռուսաստան, Գերմանիա, Իտալիա	6,300,000	2011/I	2013/IV
70.	8479	Հարթեցնող սարք	-	հատ	2	Ռուսաստան, Գերմանիա, Իտալիա	Ռուսաստան, Գերմանիա, Իտալիա	5,400,000	2011/I	2013/IV
71.	9027	Չափիչ սարքեր	-	հատ	10	Ռուսաստան, Գերմանիա, Իտալիա	Ռուսաստան, Գերմանիա, Իտալիա	3,150,000	2011/I	2013/IV
72.	8471	Համակարգիչ	-	հատ	2	Ռուսաստան, Գերմանիա, Իտալիա	Ռուսաստան, Գերմանիա, Իտալիա	2,000,000	2011/I	2013/IV
73.	8409	Յուղի հավաքման սարք՝ լրակազմով	-	հատ	3	Ռուսաստան, Գերմանիա, Իտալիա	Ռուսաստան, Գերմանիա, Իտալիա	8,100,000	2011/I	2013/IV
74.	8479	Անվադողերի փոխման սարք՝ լրակազմով	-	հատ	4	Ռուսաստան, Գերմանիա, Իտալիա	Ռուսաստան, Գերմանիա, Իտալիա	30,600,000	2011/I	2013/IV
75.	9031	Բալանսավորող սարք	-	հատ	4	Ռուսաստան, Գերմանիա, Իտալիա	Ռուսաստան, Գերմանիա, Իտալիա	18,000,000	2011/I	2013/IV
76.	8479	Ներկերի խառնման ստենդ՝ լրակազմով	-	հատ	1	Ռուսաստան, Գերմանիա, Իտալիա	Ռուսաստան, Գերմանիա, Իտալիա	11,250,000	2011/I	2012/IV
77.	8414	Կոմպրեսոր՝ անիվների համար	-	հատ	4	Ռուսաստան, Գերմանիա,	Ռուսաստան, Գերմանիա,	12,600,000	2011/I	2013/IV

1	2	3	4	5	6	7	8	9	10	11
						Իտալիա	Իտալիա			
78.	9406 00	Ջերմոցներ, այդ թվում՝	-	կգ	6000000	Հոլանդիա, Ուկրաինա, Ռուսաստան, Չինաստան	Հոլանդիա, Ուկրաինա, Ռուսաստան, Չինաստան		2011/I	2013/IV
79.	7308	Պողպատյա կոնստրուկցիա՝ լրակազմով	-	կգ	1600000	Հոլանդիա, Ուկրաինա, Ռուսաստան, Չինաստան	Հոլանդիա, Ուկրաինա, Ռուսաստան, Չինաստան		2011/I	2013/IV
80.	7003	Ջերմոցների արտաքին ապակի	-	կգ	3120000	Հոլանդիա, Ուկրաինա, Ռուսաստան, Չինաստան	Հոլանդիա, Ուկրաինա, Ռուսաստան, Չինաստան	2,009,520,000	2011/I	2013/IV
81.	7610	Ալյումինե կոնստրուկցիա՝ լրակազմով	-	կգ	800000	Հոլանդիա, Ուկրաինա, Ռուսաստան, Չինաստան	Հոլանդիա, Ուկրաինա, Ռուսաստան, Չինաստան		2011/I	2013/IV
82.	6810	Բետոնե սյունակներ	-	կգ	480000	Հոլանդիա, Ուկրաինա, Ռուսաստան	Հոլանդիա, Ուկրաինա, Ռուսաստան		2011/I	2013/IV
83.	8436 80	Ջերմոցային համալիրի սարքավորումներ՝ լրակազմով, այդ թվում՝	-	հատ	8	Հոլանդիա	Հոլանդիա	9,765,000,000	2011/I	2013/IV
84.	8414 80 80	Կոմպրեսոր	Atlas Copco, Kaiser	հատ	8	Շվեդիա, Գերմանիա	Գերմանիա		2011/I	2013/IV
85.	8419	Ջերմակլանիչ՝ լրակազմով	Alfa Laval, ТЕХЭКОПРОМ	հատ	4	Հոլանդիա, Ռուսաստան	Հոլանդիա, Ռուսաստան		2011/I	2013/IV
86.	9026	CO_2 ներարկող և կարգավորող սարքավորում՝ լրակազմով	van Dijk	հատ	8	Հոլանդիա	Հոլանդիա		2011/I	2013/IV
87.	8402 19 900	Շոգեկաթսային սարքավորում՝ լրակազմով	BBS, Crone	հատ	4	Գերմանիա, Հոլանդիա	Գերմանիա, Հոլանդիա		2011/I	2013/IV
88.	8415	Ջեռուցման և մթնոլորտի կարգավորման սարքավորում՝ լրակազմով	Priva, Hoogendorn	հատ	4	Հոլանդիա	Հոլանդիա		2011/I	2013/IV
89.	8539	Բույսերի աճը կարգավորող լրացուցիչ լուսավորման սարքավորումներ՝ լրակազմով	Hortilux, Gravita	հատ	8	Հոլանդիա	Հոլանդիա		2011/I	2013/IV
90.	8414	Օդափոխանակման վենտիլյատորներ՝ լրակազմով	-	հատ	1000	Հոլանդիա	Հոլանդիա		2011/I	2013/IV
91.	8436 80	Տարաներում բույսերի սննդի պարունակության միախառնման սարքավորում՝ լրակազմով	Revaho, Stolze	հատ	8	Հոլանդիա	Հոլանդիա		2011/I	2013/IV
92.	6006	Ջերմության խնայողության վարագույրներ	Ludwik Svenson, Alumat-Zeeman	կգ	100000	Հոլանդիա	Հոլանդիա		2011/I	2013/IV
93.	8436 80	Ջերմության խնայողության ալյումինե կոնստրուկցիա՝ լրակազմով	-	հատ	8	Հոլանդիա	Հոլանդիա		2011/I	2013/IV

1	2	3	4	5	6	7	8	9	10	11
94.	8413 70	Պոմպեր՝ ջրի	Johnson, Grundfos	հատ	400	Շվեդիա, Հոլանդիա	Հոլանդիա		2011/I	2013/IV
95.	8436 80	Օսմոսիսի հետադարձի սարքավորում՝ լրակազմով	Aquarinse, Stolze	հատ	8	Հոլանդիա	Հոլանդիա		2011/I	2013/IV
96.	7308 90	Ժելոբ՝ սև մետաղների թիթեղից	Meteor systems, Tal Agro	կգ	36000	Հոլանդիա	Հոլանդիա		2011/I	2013/IV
97.	8418	Օդապաղեցման-խոնավացման սարքավորում՝ լրակազմով	Stolze	հատ	8	Հոլանդիա	Հոլանդիա		2011/I	2013/IV
98.	8419	Օդի խոնավացման համակարգ՝ լրակազմով	Micoton	հատ	8	Հոլանդիա	Հոլանդիա		2011/I	2013/IV
99.	3920	Ջերմոցների հողածածկ (պոլիմերներից թաղանթ)	KUBO, ZWIRS	քառ. մ	240000	Հոլանդիա	Հոլանդիա		2011/I	2013/IV
100.	8424	Կաթիլային ոռոգման սարքավորում՝ լրակազմով	Meteor systems, Horticoop Revaho, Stolze	հատ	10	Հոլանդիա	Հոլանդիա		2011/I	2013/IV
101.	9032	Ջերմոցում մթնոլորտի ավտոմատ կառավարման համակարգ	Aweta, Greefa	հատ	8	Հոլանդիա	Հոլանդիա		2011/I	2013/IV
102.	8421	Ջրի ֆիլտր	-	հատ	20	Հոլանդիա, Գերմանիա, Ռուսաստան	Հոլանդիա, Գերմանիա, Ռուսաստան		2011/I	2013/IV
103.	8716	Բերքահավաքի էլեկտրական սայլակ-կոնտեյներներ, տարածքի մաքրման սարքավորումներ	Verhangenleiden, STEENKS SERVICE	հատ	80	Հոլանդիա	Հոլանդիա		2011/I	2013/IV
Ընդամենը								27,881,375,001		

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2011 թվականի
փետրվարի 3-ի N 77 - Ա որոշման

Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ր N

«ՍՊԱՅԿԱԵ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Քաղ. Երևան _____ _____ 2011 թ.

Հայաստանի Հանրապետությունը, որի անունից հանդես է գալիս Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունը (այսուհետ՝ նախարարություն), ի դեմս Տիգրան Դավթյանի, մի կողմից, և «ՍՊԱՅԿԱԵ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, ի դեմս Դավիթ Ղազարյանի (այսուհետ՝ ընկերություն), մյուս կողմից (նախարարությունը և ընկերությունը միասին հիշատակվելու դեպքում՝ այսուհետ՝ կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 3-ի N 77 - Ա որոշումը, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր) հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

Ընկերությունը պայմանագրով պարտավորվում է կատարել Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի ապրիլի 30-ի «Ավելացված արժեքի հարկի մասինե Հայաստանի Հանրապետության օրենքի 6.1-ին հոդվածով սահմանված կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի ընտրության կարգը հաստատելու մասինե N 600-Ն որոշմամբ սահմանված կարգով ընտրված ընկերության կողմից իրականացվող ներդրումային ծրագրով (այսուհետ՝ ծրագիր) նախատեսված աշխատանքները, իսկ նախարարությունը պարտավորվում է իր իրավասությունների սահմաններում աջակցել ընկերությանը՝ ծրագրի իրականացման գործընթացում:

2. Կողմերի իրավունքներն ու պարտավորությունները

2.1. Նախարարությունը պարտավոր է՝

2.1.1. կատարել ծրագրի իրականացման մոնիթորինգ։

2.2. Նախարարությունն իրավունք ունի՝

2.2.1. կատարելու վերահսկողություն ընկերության կողմից իրականացվող ծրագրի նկատմամբ.

2.2.2. ընկերությունից պահանջելու ներկայացնել պայմանագրի 3.6-րդ կետով սահմանված հաշվետվությունները։

2.3. Ընկերությունը պարտավոր է՝

2.3.1. մինչև 2013 թվականի դեկտեմբերի 31-ը կառուցել 24 հեկտար ընդհանուր մակերեսով ջերմոցային համալիր, ինչպես նաև իրականացնել ներդրումային ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.

2.3.2. պայմանագրի 2.3.1-ին ենթակետում նշված ծրագրի շրջանակներում ստեղծել առնվազն 500 նոր աշխատատեղ՝ 2011 թ.՝ 70, 2012 թ.՝ 250 և 2013 թ.՝ 180, աշխատողներին ապահովելով մոտավորապես 120 հազ. դրամ միջին աշխատավարձով.

2.3.3. ավելացնել հարկային պարտավորությունները և սոցիալական ապահովության վճարները՝ աշխատողների թվի և արտադրանքի իրացման ծավալների ավելացմանը համապատասխան.

2.3.4. կատարել Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության կողմից բացահայտված թերությունների վերացման համար տրված ցուցումները.

2.3.5. իրականացնել ծրագրով նախատեսված այլ անհրաժեշտ աշխատանքներ։

2.4. Ընկերությունն իրավունք ունի՝

2.4.1. ինքնուրույն որոշելու ծրագրի իրականացման մեխանիզմները.

2.4.2. Ծրագրի իրականացման աշխատանքներում ներգրավելու այլ կազմակերպություններ և անհատ փորձագետների, որոնց կողմից իրականացվող աշխատանքների որակի պատասխանատվությունը կրում է ընկերությունը:

3. Հաշվետվությունը և մոնիթորինգը

3.4. Ընկերության կողմից ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացվում է մոնիթորինգ:

3.5. Նախարարությունը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ, ինչպես նաև ուսումնասիրել ընկերության կողմից իրականացված մոնիթորինգը և ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր ու նյութեր:

3.6. Մոնիթորինգի ընթացքում բացահայտված թերացումների և բացթողումների շտկման նպատակով նախարարության կողմից ընկերությանը տրվում են ցուցումներ և կատարվում են առաջարկություններ:

3.7. Նախարարության կողմից իրականացվող մոնիթորինգի ընթացքում ընկերությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

3.8. Մոնիթորինգն իրականացվում է ծրագրով ստանձնած պարտավորությունների կատարման ընթացքը գնահատելու նպատակով:

3.9. Ընկերությունը նախարարություն է ներկայացնում եռամսյակային, կիսամյակային և տարեկան հաշվետվություններ (տեքստային և ֆինանսական):

4. Կողմերի պատասխանատվությունը

4.1. Ընկերությունը պայմանագրով և ծրագրով սահմանված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, նախարարության վերահսկողությունից խուսափելու դեպքում՝ նախարարությունն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը և

ընկերությունից պահանջելու վճարել հետադարձված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 3-ի N 77 - Ա որոշման N 1 հավելվածով սահմանված՝ ընկերության կողմից Հայաստանի Հանրապետություն ներմուծվող ապրանքների ընդհանուր գումարից հաշվարկված ավելացված արժեքի հարկի գումարները և դրանք սահմանված ժամկետից ուշ վճարելու համար օրենքով սահմանված տույժերը՝ ավելացված արժեքի հարկի վճարման ժամկետի հետադարձման օրվանից մինչև գործարքն իրականացնելու հաշվետու ժամանակաշրջանի ավարտը՝ «Ավելացված արժեքի մասինե Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով։

4.2. Կողմերը համաձայնվում են պայմանագրի շուրջ ծագող տարաձայնությունները կարգավորել բանակցությունների միջոցով։ Համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով։

5. Պայմանագրի գործողության ժամկետը

5.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի կողմից ստորագրման պահից և գործում է մինչև ծրագրի պատշաճ իրականացման ավարտը։

5.2. Ծրագիրը համարվում է իրականացված՝ պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարման դեպքում։

6. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով սահմանված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել։ Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, հաղորդակցության միջոցների աշխա-

տանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. Եզրափակիչ դրույթներ

7.1. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

7.2. Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները ենթակա են կարգավորման՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.3. Պայմանագիրը կնքված է հայերենով՝ 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

8. Կողմերի հասցեները և ստորագրությունները

ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	«ՍՊԱՅԿԱԵ ՍՊԸ
Հասցեն՝ ՀՀ, քաղ. Երևան, Մ. Մկրտչյան 5	Հասցեն՝ ՀՀ, քաղ. Երևան, Արշակունյաց 252
_____ Տիգրան Դավթյան (ստորագրությունը)	_____ Դավիթ Ղազարյան (ստորագրությունը)
Կ.Տ.	Կ.Տ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Դ. ՍԱՐԳՍՅԱՆ